

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն № 1 4 0

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2016թ. հունիսի 29-ին կայացած նիստի**

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

2. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանի «Քաղաքական լիդերություն» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

3. Ընթացիկ հարց: Հայցորդ ձևակերպելու մասին դիմումի քննարկման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ. Բեգիրջյան:

4. Ընթացիկ հարց: Կառավարչական գործունեության հոգեբանական գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի «Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները» կոլեկտիվ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը:

Ձեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան:

5. Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Լ.Պետրոսյանի «Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափությունները» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը:

Ձեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան:

1. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Խ. Բեգիրջյանը ներկայացրեց, որ 2016-2017 ուսումնական տարվա ասպիրանտուրայի (առկա ուսուցման համար անվճար՝ տարկետման իրավունքով և վճարովի՝ առանց տարկետման իրավունքի, հիմունքներով) ընդունելության համար ՀՀ պետական կառավարման ակադեմիային հատկացվել են հետևյալ տեղերը

Հ/Հ	Դասիչ	Մասնագիտություն	Հատկացված տեղեր	
			Անվճար	Վճարովի
1.	ԺԲ.00.02	Հանրային իրավունք	1*	1
2.	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	2	1
3.	ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	1
Ընդամենը			4	3

*Ասպիրանտուրայի տեղերի վերաբաշխման արդյունքում Ակադեմիային հատկացվել է ևս մեկ տեղ՝ անվճար հիմունքով՝ տարկետման իրավունքով ԺԲ.00.02 մասնագիտացմամբ:

Ընդունելության քննությունների մասնակցել են 6 հոգի: Ընդունելության արդյունքների հիման վրա անվճար հիմունքով՝ տարկետման իրավունքով ասպիրանտուրա են ընդունվել՝

1. ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտացմամբ՝ Գեորգի Ավագյանը և Ռաֆֆի Նալչաջյանը:

2. Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտացմամբ՝ Սեդրակ Հարությունյանը և Արսեն Զաքարյանը:

3. ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտացմամբ՝ Վիլյամ Հալաջյանը:

Վճարովի հիմունքով՝ առանց տարկետման իրավունքի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվել Կարեն Միքայելյանը:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Գ. Գսպոյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանի «Քաղաքական լիդերություն: Տեսություն և պրակտիկա» մենագրությունը (3-րդ լրամշակված վերահրատարակություն) տպագրության երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝

Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանի «Քաղաքական լիդերություն: Տեսություն և պրակտիկա» մենագրությունը (3-րդ լրամշակված

վերահրատարակություն) երաշխավորել տպագրության:

3. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հայցորդ ձևակերպելու մասին դիմումի քննարկման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Խ.Բեգիրջյանը ներկայացրեց, որ իրավագիտության ամբիոնում քննարկվել է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտացմամբ հայցորդ ձևակերպվելու համար դիմած Անի Ալբերտի Ամիրյանի «Հայաստանի Հանրապետության կառավարության օրինաստեղծ գործունեությունը (սահմանադրաիրավական վերլուծություն)» թեմայով թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկման և գիտական ղեկավարի առաջադրման հարցը: Իրավագիտության ամբիոնը 22.06.2016թ. կայացած նիստի որոշմամբ առաջարկում է՝

1. Անի Ալբերտի Ամիրյանին ձևակերպել իրավագիտության ամբիոնում որպես հայցորդ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտացմամբ:

2. Թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարության օրինաստեղծ գործունեությունը (սահմանադրաիրավական վերլուծություն)» վերտառությամբ:

3. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին՝ հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը:

Արտահայտվեցին՝ Խ.Բեգիրջյանը, Ա.Գևորգյանը:

Որոշեցին՝

1. Անի Ալբերտի Ամիրյանին ձևակերպել իրավագիտության ամբիոնում որպես հայցորդ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտացմամբ:

2. Թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարության օրինաստեղծ գործունեությունը (սահմանադրաիրավական վերլուծություն)» վերտառությամբ:

3. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին՝ հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը:

4. **Լսեցին՝** Կառավարչական գործունեության հոգեբանական գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Ադուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի «Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները» կոլեկտիվ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը:

Ձեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Ադուզումցյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Ա.Այվազյանը:

Որոշեցին՝ Կառավարչական գործունեության հոգեբանական գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Ադուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի «Կառավարիչների հոգեբանական ընտրության գործնական ուղեցույց» ձեռնարկը երաշխավորել տպագրության:

5. Լսեցին՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Լ.Պետրոսյանի «Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափությունները» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Ադուգումցյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ռ.Ադուգումցյանը:

Որոշեցին՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Լ.Պետրոսյանի «Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափությունները» մենագրությունը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
29 հունիսի 2016թ.

Կ.Տ.